Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2023-2024 ուս. տարվա ապրիլի 1-ին կայացած առցանց հարցման թիվ 8 նիստի

ք.Երևան 01 ապրիլի 2024թ.

Ներկա էին ՝ գիտխորհրդի 20 անդամներից 16–ը

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը. Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» Մաս II, վերնագրով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը. Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» Մաս II, վերնագրով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:**

Լսեցին ՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով ով առցանց կարգով հաղորդեց, որ Ալբերտ Սահակյանի կողմից հեղինակած ուսումնական ձեռնարկը ենթարկվել է ինչպես

ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման: Ներքին գրախոս՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան) և մեթոդական խորհրդում և կարծիքները դրական են: Ա. Հովհաննիսյանը նշեց, որ Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացվել է բովանդակալից է և ծավալուն աշխատանք, կազմված է 241 էջից ներառում է. 6 գլուխներ 12 աղյուսակ, 6 նկար: Աշխատանքը ներկայացված է բավականին պարզ և մատչելի, հասանելի ուսանողի համար, ներառված է այս բնագավառին առնչվող նորագույն դասակարգումները և պրակտիկայում կիրառվող նորագույն մեթոդները: Ուսումնական ձեռնարկը արժեքավոր է նաև այն առումով, որ լրացնում է մայրենի լեզվով այս բնագավառում նմանօրինակ գրքերի բացակայության պակասը:

Արտաքին գրախոս՝ Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի փոխտնօրեն դ.գ.թ. Լիլիթ Ֆերդինանդի Ղազարյանը գտնում է, որ ձեռնարկը էապես կնպաստի դեղագիտության ոլորտում մասնագիտական կրթություն ստացող ուսանողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձեռքբերմանը: Այն կարող է օգտագործվել մասնագետների լայն շերտերի կողմից. ինչպես դասախոսների, այնպես էլ՝ առողջապահության և դեղագործության կազմակերպման ոլորտի մասնագետների կողմից:

Որոշեցին ՝(միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի և դեղագիտության ոլորտի մասնագետների համար՝ թույլատրել տպագրության (150 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

2. **Ընթացիկ հարցեր:**

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝

բ.գ.թ., դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական քարտուղար՝

բ.գ.թ, դոցենտ **Ա. Դաղայան**